https://doi.org/10.53587/25792865-2022.8-72

ԴԻՄԻՏՐՈՎԻ «ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ» ԵԿԵՂԵՑՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հովհաննիսյան Գ.Ա.
Փորձաքննությունների ազգային բյուրո,
Երևան, Հայաստան

Հոդվածս նվիրված է հնագիտական փորձագիտական հետազոտության օբյեկտի՝ «Դիմիտրով գյուղի «Սբ. Աստվածածին» եկեղեցու ճարտարապետական և գեղազարդման առանձնահատկություններին, ըստ այդմ՝ հետազոտության համար որդեգրված մեթոդական մոտեցումներին և դրանց օգտագործման սկզբունքներին: Հետազոտության են ենթարկվել նաև եկեղեցու վրա կատարված շինարարական (վերականգման և վերանորոգման) աշխատանքները, հուշարձանի պահպանական տարածքում առկա շարժական մշակութային արժեքներն ու մշակութային նշանակության առարկաները: Արդյունքում պարզվել է եկեղեցու վրա կատարված շինարարական աշխատանքների ազդեցությունը հուշարձանի՝ որպես մշակութային արժեքի վրա, ինչպես նաև վերլուծությամբ բացահայտվել է եկեղեցու կառուցման, դավանաբանական ուղղվածության և ազգային պատկանելության մասին տեսությունների իսկությունը:

Բանալի բառեր. *Հնագիտական փորձաքննություն, մշակութաբանություն, ինքնաշեն եկեղեցի, ծագումնաբանություն, խաչ, խաչի խորհրդաբանություն, ճարտարապետություն, ճարտարապետական հորինվածք, բազիլիկ եկեղեցի, խաչքար, խաչաքանդակ սալ, արձանագրություն:*

Մշակութաբանական փորձաքննությունների հնագիտական բնագավառը փորձագիտական ոլորտում նոր զարգացող ուղղություն է, ինչը ցավոք ձևավորվում է այնպիսի հանցագործության հիման վրա ինչպիսին է մշակութային վանդալիզմը: Վերջինս իրենից ենթադրում է գանձագողության նպատակով հնագիտական շերտի վնասում, մշակութային հուշարձանի նախնական տեսքի խաթարում և աղճատում, պետության պահպանության տակ գտնվող մշակութային հուշարձանների տարածքում ապօրինի շինությունների կամ հուշարձանների կառուցում և այլն: ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի մշակութաբանական փորձաքննությունների բաժնում կատարվող փորձաքննությունների մեծամասնությունը «Հնագիտական փորձաքննություններ» ենթատեսակով փորձաքննություններ են, որոնց դեպքում

Թղթակցական հասցեն՝ Հովհաննիսյան Գայանե Արամի, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի, մշակութաբանական փորձաքննությունների բաժնի փորձագետ, ՀՀ ԳԱԱ «Արվեստի ինստիտուտի» ասպիրանտ, Հայաստան, ք. Երևան, Իսակովի 24, e-mail: gayane7010@gmail.com

փորձաքննության առարկաներ են հանդիսանում անշարժ մշակութային հուշարձանները և մշակութային հնագույն գտածոները: Նման փորձաքննությունների իրականացման համար կիրառվող գործիքակազմը բազմազան է, և մեկ փորձաքննության շրջանակներում խնդրո առարկայով պայմանավորված կարող են կիրառվել հարակից տարբեր ոլորտների մեթոդներ, օրինակ մշակութաբանական, հնագիտական, արվեստաբանական, պատմագիտական, տեխնիկատեխնոլոգիան, ինչպես նաև համալիր փորձաքննության շրջանակներում ըստ անհրաժեշտության կարող են իրականացվել շինարարատեխնիկական, հետքաբանական, ապրանքագիտական և այլ հետազոտություններ:

Հարկ է նշել, որ արվեստագիտության մեջ ուշ միջնադարն ի համեմատություն վաղ և զարգացած միջնադարի բավարար չափով ուսումնասիրված չէ, այդ է պատճառը, որ 19-րդ դարի գյուղական ինքնաշեն եկեղեցիների մասին մասնագիտական գրականության մեջ տեղեկությունները խիստ սակավ են. թերևս դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ չնայած 19-րդ դարում հայկական մշակույթը զարթոնք էր ապրում, սակայն այն ընդգրկում էր լեզուն, գրականությունը, կերպարվեստը, մամուլը, որոնք մեծ թափով զարգանում էին հայկական գաղթօջախներում, իսկ տնտեսաքաղաքական վիճակը և Հայաստանի վարչատարածքային բաժանումները ճարտարապետության զարգացման համար անբարենպաստ պայմաններ էին, որպեսզի ստեղծվեին բարձրարվեստ կառույցներ՝ հատկապես գյուղական եկեղեցաշինության բնագավառում:

19-րդ դարի հայկական գյուղական եկեղեցիները հիմնականում ունեն պարզ ուղղանկյուն հորինվածք, չունեն արտաքին ճոխ հարդարանքներ կամ բարդ ճարտարապետական կոնստրուկցիաներ և կառուցվել են տվյալ ժամանակաշրջանում համայնքի ջանքերով և ունեցած սակավ միջոցներով, թերևս այդ է պատճառը, որ մասնագետներն այս թեմայի շրջանակներում բավարար չափով մասնագիտական հոդվածներով և աշխատություններով հանդես չեն եկել: Սակայն, անկախ նշված հանգամանքներից, այդ եկեղեցիներից շատերը պետության լիազոր մարմնի կողմից ցուցակագրվել են և որակվել իբրև պատմության և մշակույթի անշարժ մշակութային հուշարձաններ [1]:

Այդ է պատճառը, որ հաճախ նմանատիպ հուշարձանների փորձագիտական հետազոտության համար մասնագիտական գրականության բացակայության պարագայում փորձագետն իր առջև դնում է նոր խնդիրներ և դիմում դրանց պարզմանն ուղղված մի շարք մեթոդների, ինչպիսին է՝ արվեստաբանական նկարագրողական մանրամասն վերլուծությունը, հուշարձանի վրա առկա պատկերազարդ հարթաքանդակների տեղի դիրքի ձևի քննությունն ու իմաստաբանական օբյեկտիվ վերլուծությունը, դեպքի վայրի զննության արդյունքում հուշարձանի մասին տեղի բնակիչների պատմությունների հավաքագրումը, որը կհանդիսանա ոչ որպես գործի հանգամանքների կողմնորոշիչ միջոց, այլ որպես բանահավաքություն, ինչն էլ կօգնի ի մի

բերել հուշարձանի պատմության՝ վերականգնման և վերանորոգման տարբեր փուլերի մասին տեղեկություններ: Այսպիսով, հուշարձանի մասին առաջնային տեղեկատվության ձեռք բերման մեթոդի շրջանակներում կատարվել է տեղում էմպիրիկ տեղեկատվության ձեռք բերում՝ դիտարկում:

Ստորև ներկայացվում է 19-րդ դարի Դիմիտրով գյուղի «Սբ. Աստվածածին» եկեղեցու մշակութաբանական հետազոտության արդյունքները: Հուշարձանն ըստ հրապարակային տեղեկատվության, իր դավանաբանական և ազգային պատկանելության առումով «կռվախնձոր» է դարձել հայերի և ասորիների միջև:

Հարկ է նշել, որ հետազոտության շրջանակներում կատարվել են՝ Սբ. Աստվածածին եկեղեցու ճարտարապետական առանձնահատկությունների վերլուծություն, ինչպես նաև եկեղեցու վրա առկա պատկերների, արձանագրությունների և տարածքում առկա մետաղական խաչերի, խաչաքանդակ սալերի, փայտյա դռների պատկանելության և ծագման շուրջ վերլուծություններ: Համեմատական մեթոդի շրջանակներում կատարվել է փայտե սյուների ձևի պարզման վերլուծություն, որի նպատակն էր պարզել՝ արդյոք նման սյուներ առկա են հայկական ինքնաշեն և Հայաստանի տարածքում առկա ասորական՝ *Վերին Դվին գյուղի Թովմաս առաքյալին նվիված «Ումրա» (Մար Թումա) պեպ. ցուցիչ՝ 3.92.1, Դիմիտրով գյուղի Սուրբ Կիրիլ (կամ Կիրիկ և Իուլիտա Սուրբ Նահատակների) պեպ. ցուցիչ՝ 3.38.2,* եկեղեցիներում, թե՝ ոչ: Ուսումնասիրվել են նաև վերջին տարիներին կատարված շինարարական (վերականգման և վերանորոգման) աշխատանքները, պարզելու՝ արդյո՞ք դրանք բացասական են անդրադարձել հուշարձանի մշակութային արժեքի կամ ազգային պատկանելությունը ցույց տվող հանգամանքների վրա, թե՝ ոչ:

Ըստ ՀՀ Կառավարության 24 հունվարի 2002 թվականի «ՀՀ Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N 65 որոշման Դմիտրով գյուղի «Սբ. Աստվածին» եկեղեցին գտնվում է գյուղի հարավ արևմտյան եզրին, կառուցվել է 1868 թվականին, հանդիսանում է տեղական նշանակության հուշարձան և ունի պետ. ցուցիչ՝ (3.38.1) [2]:

Նկար 1. Դիմիտրով գյուղի «Սբ. Մարիամ Աստվածածին» եկեղեցին հարավ արևմտյան կողմից

Դմիտրով գյուղի «Սբ. Մարիամ Աստվածածին» եկեղեցին պատկանում է 19-րդ դարի ՀՀ տարածքում առկա ինքնաշեն գյուղական եկեղեցիների տիպին, ուղղանկյուն հատակագծով եռանավ բազիլիկ տիպին հարող կառույց է, որն արևելքում ավարտվում է ուղղանկյուն, կամարակապ խորանով և երկու կողմերից ուղղանկյուն փոքրաչափ ավանդատներով: Ներսից և դրսից եկեղեցին սվաղված է, հատակը՝ սալարկված, տանիքը՝ քառաթեք: Ունի երկու մուտք՝ արևմտյան և հարավային կողմերից և ութ կամարաձև պատուհաններ՝ մեկ պատուհան առկա է արմտյան մուտքի դռան բարավորի տեղում, իսկ ավանդատներն ու խորանն ունեն մեկական պատուհաններ, հարավային և հյուսիսային պատերն ունեն երկուական պատուհաններ, որոնք նորացված են մետաղապլաստե մուգ շականակագույն փեղքերով պատուհաններով, ինչը և խաթարել է եկեղեցու պատմական տեսքը և համահունչ չէ 19-20-րդ դարերում դրա ունեցած արտաքին նկարագրին:

Արևմտյան մուտքին կից առկա է տուֆից շարվածքով քառասյուն զանգակատուն, որի սյունազարդ գմբեթը և վեղարը մետաղից են՝ պսակված մետաղական խաչով: Եկեղեցին հենված է նավերի երկայնքով ձգվող փայտե կլոր գերանների վրա, որոնք պահում են 3 զույգ փայտյա գավազանաձև (Т-աձև) սյուները՝ ուղղանկյուն տարածքը բաժանելով 3 նավերի: Սյուներն ու խոյակները իրենց ձևով կրկնում են Առաքելական եկեղեցու վարդապետական օձագլուխ գավազանների ձևը, ինչպես նաև իրենց ձևով հանդիսանում հայկական մշակութային ժառանգության բացառիկ նմուշներից մեկի՝ Սևանի եկեղեցու փայտե քանդակազարդ խոյակի ձևի պարզեցված նմանակում: Այս ձևը մտնում է նաև հայկական ժողովրդական ճարտարապետության մեջ, որի հոյակերտ ապացույցն է Ադրբեջանի կողմից զավթված՝ Արցախի հյուսիսային շրջանի հայկական Բանանց գյուղի ժողովրդական տներում առկա փայտե խոյակները: Բացի այդ նման խոյակներով սյուներ կարելի է գտնել 19-րդ դարի գյուղական ինքնաշեն մի շարք հայկական եկեղեցիներում, օրինակ՝ Մելիք գյուղ, «Սբ. Հովհաննես» եկեղեցի, 1891թ., իսկ ներքին տարածության սվաղումն ու ներկումը կարող էր ուղղորդիչ փաստ հանդիսանալ եկեղեցու ուղղափառ կողմնորոշման մասով, եթե այն չլիներ գյուղական ինքնաշեն եկեղեցի, որտեղ չկան խիստ կանոններ: Բացի այդ նման օրինակներ ևս շատ են հանդիպում 19-րդ դարի գյուղական եկեղեցական ինքնաշեն ճարտարապետության մեջ, օրինակ՝ Գեղարոտի «Սբ. Գրիգոր» եկեղեցի, 1892 թ.: Նմանատիպ սյուներ առկա են նաև Վերին Դվինի «Մար Թումա» եկեղեցում, XIX դ., սակայն ասորական ճարտարապետության արտահայտչամիջոց՝ ուղիղ անկյուններին բնորոշ այս խոյակները ևս կողային մասում ունեն ուղիղ և ոչ կորացող ձև, ինչպես Դմիտրովի «Սբ. Աստվածածին» եկեղեցու դեպքում:

Արտաքինից և ներքինից եկեղեցին հարուստ չէ գեղարվեստական հարդարանքներով կամ ճարտարապետական զարդաձևերով, եկեղեցուն գեղարվեստական շունչ են հաղորդել նոր տեղադրված կենտրոնական խաչի հորինվածքով փայտյա դռները և եկեղեցու կառուցմանը ժամանակակից հարավային մուտքի, քարե բարավորի կամարի փականաքարի տեղում առկա քարասալը, որն իրենից

ներկայացնում է սեղանաձև շրջանակի մեջ առնված հավասարակողմ Մալթական համարվող, ութագագաթ տիպի խաչի պատկեր, որի թևերն ավարտվում են երկու սրանկյուն գագաթներով, խաչի չորս կողմերում առկա է ծաղիկների ոչ արհեստավարժ կերպով պատկերում:

Նկար 2. «Սբ. Աստվածածին» եկեղեցու հարավային մուտքի խաչաքանդակը

Նման խաչը կազմված է չորս նիզակների միացումով առաջացնելով ութագագաթ խաչ, որի յուրաքանչյուր ծայրը ցույց է տալիս մեկ առաքելություն [3]: Դրանք խորհրդանշում են Մատթեոսի ավետարանի ութ երանությունները, ինչպես նաև կարգի ութ հիմնարար առաքինությունները՝ հավատարմություն, բարեպաշտություն, ազնվություն, քաջություն, պատիվ և փառք, արհամարհանք մահվան հանդեպ, համերաշխություն աղքատների և հիվանդների հանդեպ և հարգանք եկեղեցու հանդեպ: Կողային ծաղիկները խորհրդանշում են նոր կտակարանի չորս ավետարանիչներին, դրանք սովորաբար պատկերվել են իրենց խորհրդանիշներին համապատասխան կենդանակերպերով՝ առյուծ, արծիվ, հրեշտակ, ցուլ: Սակայն հետագայում տարբեր հուշարձանների խաչային հորինվածքներում ոճավորվել են՝ վերածվելով փոքր խաչերի կամ ծաղիկների, ինչպես «Սբ. Աստվածամայր» եկեղեցու դռան բարավորի օրինակում: Խաչի կենտրոնական հատվածի նմանօրինակ ծաղիկն, ըստ երևույթին, խորհրդանշում է Մարիամ Աստվածածնին, ում խորհրդաբանական սիմվոլներից մեկը հանդիսանում է սպիտակ շուշանը, իբրև իր անաղարտության և անմեղության խորհրդանիշ: Ութագագաթ խաչի և դրա չորս անկյուններում նմանատիպ լուծումների նախօրինակները հայկական մշակույթում կարելի է հանդիպել XII-XIVդդ. Կիլիկյան Հայաստանի միապետների կողմից հատված դրամների և պետական զինանշանների վրա (Լուսինյան արքայական տան զինանշանը, Հռոմկլայի զինանշանը, Կոստանդին IV նղրեցի թագավորի զինանշանը, Կիպրոսի արքա Ժան II Լուսինյանի զինանշանը և այլ օրինակներ) [4; 5, լուսանկարների

ալբոմ], իսկ հայկական լեռնաշխարհում խաչային նմանօրինակ հորինվածքի կիրառություն հանդիպում է Սևանավանքի փայտե քանդակազարդ խոյակի կողմերից մեկի (Սբ. Առաքելոց վանք, 847 թ.) կողային հատվածներում:

Առհասարակ, եկեղեցիների ծագման, կառուցման թվի, պատվիրտուի, վերակառուցումների և այլ կարևոր տեղեկություններ պարունակում են դրանց վրա եղած արձանագրությունները, որոնք ապացուցողական հիմք են հանդիսանում նման պարզաբանումների համար: Հետազոտվող հուշարձանի ճակատակալի վերնամասում առկա են երկու հայալեզու արձանագրություններ:

Ըստ Արարատյան Հայրապետական թեմի կողմից հրապարակված վիմագրագետ՝ Հայկ Հակոբյանի կողմից վերծանված, «Դմիրտրովի «Սբ. Աստվածածին» եկեղեցու արձանագրությունների. առաջին» արձանագրության մեջ ասվում է. «Տ(է)ր ա(ստուա)ծ Յ(իսու)ս Ք(րիստո)ս. /186- ամ(ի) / կառուցաւ / Ս(ուր)բ Ա(ստուա)ծ(ածի)ն եկէղէցին / գէղջ Նէրքին Ղօյլասարի, / ա(մենայ)ն օժանտակութ(եամ)բ Յակ/օբ ք(ա)հ(անայ)ի, ժօղ(ովր)թի ի(ւ)ր(ո)յ, փ(ետրուարի) 1:

Նկար 3. «Սբ. Աստվածածին» եկեղեցու հարավային մուտքի արձանագրությունը

Երկրորդ արձանագրության մեջ գրված է. «1910 ամ(ի) / յ(ու)ն(ի)ս 1. / նորոքէց / Ղոյլասա/ոու եգեղե/ցին յիշ(ա)տ(ա)կ / Յովագիմ / Տ(է)ր-Վ(ա)ոդ(ա)նե(ա)ն://» [6]:

Նկար 4. «Սբ. Աստվածածին» եկեղեցու հարավային մուտքի արձանագրությունը

Այստեղից հետևում է, որ եկեղեցու կառուցման վայրը, կառուցման ժամանակ՝ 1860-ական թվականներին կոչվել է՝ Ներքին Ղոյլասար, և որ եկեղեցին կառուցվել է Հակոբ քահանայի օժանդակությամբ: Երկրորդ արձանագրությունը փաստում է ավելի ուշ՝ 1910 թվականին Ներքին Ղոյլասար գյուղի եկեղեցու նորոգման մասին, որտեղ հիշատակվում է Հովակիմ Տեր-Վարդանյանի անունը:

Հարավային մուտքի մոտ առկա է տանիքածածկ բաց նախասրահ, որի արևմտյան կողմում հուշարձանի զննության օրվա դրությամբ առկա էին 5 քարասալեր՝ «1959թ.» արձանագրությամբ և խաչակող, անհավասարակողմ խաչով քարասալ, կարմիր տուֆով հյուսկեն խաչային հորինվածքով քարասալ, հողմահարված կարմիր տուֆով խաչային հորինվածքով սալ, պայմանական բյուզանդական խաչ համարվող կենտրոնական խաչի մեդալիոնով քարասալ, հրեշտակի պատկերաքանդակ:

Նկար 5. «Սբ. Մարիամ Աստվածածին» եկեղեցու հարավային մուտքի մոտ առկա սալերը

Նախասրահի դրսի ցածր պատին առկա էր հենած մի խաչքարային հորինվածքով սալ, որի կենտրոնական հատվածում առկա է հայկական արվեստում լայն տարածում գտած ծաղկած խաչի պատկեր, որի հիմքում արմավի տերևներ են:

Նկար 6. «Սբ. Մարիամ Աստվածածին» եկեղեցու հարավային մուտքի մոտ առկա խաչքար

Հայկական և ասորական եկեղեցիներն իրենց ավանդական ճարտարապետական հորինվածքով, գրեթե չունեն ընդհանրություններ, բացառությամբ բազիլիկ ճարտարապետական հորինվածքի և ուղղանկյուն հատակագծով խորանների, որոնք հանդիպում են տարբեր ժողովուրդների մոտ՝ ընդհանուր արևելաքրիստոնեական տաճարների վաղագույն օրինակներից սկսած: Ուղղանկյուն հատակագծով խորաններով հայկական եկեղեցիներից են, օրինակ՝ Եղեգնաձորի շրջանի Եղեգիս գյուղից 5-6 կմ դեպի հյուսիս-արևելք գտնվող Ցախաց Քար վանքի Սբ. Կարապետ եկեղեցին, Արցախի Մարտակերտի շրջանում Դադիվանքի անթվակիր միանավ բազիլիկ եկեղեցին և Արցախում հայտնի մի շարք այլ օրինակներ:

Եկեղեցու ներսում առկա էին հանված փայտե դռներ հարդարման պարզ համակարգով՝ կենտրոնական փոքրաչափ բյուզանդական տիպի համարվող խաչային հորինվածքով, որոնք բնորոշ չեն հայկական եկեղեցիների դռներին, և մեր ուսումնասիրությունների արդյունքում ինքնաշեն եկեղեցիների դռների պարագայում ևս չհայտնաբերվեցին նման գեղազարդման մոտիվներով փայտե դռներ, ուստի դրանց և ներսում եղած սրբապատկերների տեղադրումն ամենայն հավանականությամբ ասորի ժողովրդի ավանդն է այդ եկեղեցուն: Ուսումնասիրության արդյունքում նաև պարզվեց, որ ասորի ժողովրդի կողմից իրականացվել են այդ եկեղեցու որոշ վերանորոգման, ինչպես նաև պատուհանների փոխման աշխատանքներ, սակայն նշվածը փաստող որևէ փաստաթուղթ կամ արձանագրություն ուսումնասիրությունների արդյունքում չի հայտնաբերվել:

Դռների հետ առկա էր նաև եկեղեցուց իջեցրած խաչակող հորինվածքով երկաթե խաչ, որն օգտագործվում է և՛ ուղղափառ և՛ առաքելական եկեղեցիներում հայկական եկեղեցիների վրա առկա նմանօրինակ խաչային հորինվածքի վաղ օրինակներից է Մոմիկ ճարտարապետի կողմից ստեղծված Նորավանքի արտաքին արևելյան պատին (13-14-րդ դդ) քանդակված խաչը, ինչը ապացուցում է, որ խաչի նման ձևի կիրառությունը խորթ չի եղել նաև հայոց մեջ, ինչը և չի բացառում, որ այն տեղադրված է եղել ասորիների կողմից, երբ նրանք գյուղում թվաքանակով մեծամասնություն են կազմել և ներդրում են ունեցել գյուղում տեղակայված հայկական եկեղեցու պահպանության հարցում:

Ասորի ժողովուրդն անկախ դավանաբանական անջատումներից իր եկեղեցական ճարտարապետության մեջ սովորաբար կրկնում է իրենց փառահեղ մշակութային անցյալի հնագույն պալատական համալիրների և տաճարների ձևերը, ինչպես օրինակ Սարգոն 2-րդի պալատի կամ Իշտարի դարպաների աշտարակները, ինչն, օրինակ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում առկա ասորական եկեղեցիների դեպքում դառնում է կենտրոնական մի հզոր ուղղանկյուն եռահարկ աշտարակ՝ զանգակատան գործառույթով: Տեղյակ լինելով ասորական հնագույն մշակույթի հարուստ պատմությանը և ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության տարածքում առկա ուղղափառ ասորական եկեղեցիների (Վերին Դվինի, «Մար Թումա» եկեղեցի, XIX դ.,

Դմիտրովի «Սուրբ Կիրիլ» եկեղեցին, 1840թ.) ճարտարապետությունը և ներքին հորինվածքը, նաև կատարելով համեմատական վերլուծություն Դմիտրով գյուղի «Սբ. Աստվածածին» եկեղեցու հետ՝ պարզ է դառնում, որ ընդհանուր հուշարձանն իր արձանագրություններով և ճարտարապետական առանձնահատկություններով հարում է հայկական գյուղական բազիլիկ եկեղեցիների հորինվածքներին և աղերսներ չունի Հայաստանում ասորական քրիստոնեական տաճարների ընդհանուր հորինվածքային առանձնահատկությունների հետ:

Նկար 7. Դիմիտրովի «Սուրբ Կիրիլ» եկեղեցին 1840թ.

Սակայն այս փաստը չի հերքում այն հավանական հանգամանքը, որ ապրելով այս գյուղում, ասորի ժողովուրդը, երբ թվաքանակով առավել է եղել, իր ավանդն է ունեցել արդեն իսկ կանգուն եկեղեցու պահպանման և շարժական արժեքներով (սրբապատկերներ, խաչեր այլ նշանակության առարկաներ) հարդարման գործում: Այնուամենայնիվ, եկեղեցու ներսում առկա փայտե դռները և խաչը, անկախ դրանց ազգային կամ դավանաբանական պատկանելությունից անհրաժեշտ է հավուր պատշաճի պահպանել եկեղեցու տարածքում, իբրև այդ հուշարձանի պատմական վկայության անբաժանելի մաս:

Հարկ է նշել նաև, որ Արարատի մարզի Դմիտրով գյուղի «Սուրբ Աստվածածին» եկեղեցու այն շինարարական աշխատանքները, որոնք ակնադիտական զննությամբ տեսանելի են և իրականացվել են թե՛ հայկական, թե՛ ասորական համայնքների կողմից եկեղեցուն՝ որպես մշակութային արժեք ներկայացնող հուշարձանի վնաս չի պատճառվել, քանի որ կատարված աշխատանքների արդյունքում չի ձևափոխվել եկեղեցու ճարտարապետական հորինվածքը, ինչպես նաև չեն վնասվել կարևոր նշանակության ճարտարապետական հարդարանքները կամ պատմամշակութային կարևոր նշանակության կոնստրուկտիվ նյութերը:

Ամփոփելով կատարված հետազոտությունները՝ կարելի է եզրակացնել, որ Դմիտրով գյուղի «Սուրբ Աստվածածին» եկեղեցին իր ճարտարապետական հորինվածքով, ներքին պլանավորմամբ, հայալեզու արձանագրություններով և վերը նշված այլ հանգամանքներով համարվում է հայկական առաքելական եկեղեցի, այսինքն՝ կառուցված հայերի ձեռքով և ջանքերով, որի պահպանման և շարժական մշակութային արժեքներով (սրբապատկերներ, խաչասալեր և շարժական մշակութային նշանակության առարկաներ՝ խաչեր, դռներ) հարդարելու գործում առկա է ասորի ժովորդի ներդրումը:

Գրականության ցանկ

1. ՀՀ օրենքը «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին»: Համացանցային հասանելիությունը՝ https://www.arlis.am/:
2. ՀՀ Կառավարության 24 հունվարի 2002 թվականի «ՀՀ Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N 65 որոշումը,(3.3.38) Համացանցային հասանելիությունը՝ https://www.arlis.am/:
3. Մանասյան Գ., «Խորհրդանշանների հանրագիտարան». Երևան, 2007թ.:
4. Քյուրքչյան Ա., Խաչերեան Հ. Բ., «Հայկական զարդարվեստ». Երևան, 2010թ.:
5. Դեմոյան Հ. «Հայկական ազգային խորհրդանշանները». Երևան, 2012թ.:
6. «Արարատյան Հայրապետական թեմը պարզաբանում է տարածել Դիմիտրովի Ս. Աստվածածին եկեղեցու պատկանելիության մասին»: Համացանցային հասանելիությունը՝ https://artsakhpress.am/arm/news/111605/araratyan-hayrapetakan-temy-parzabanum-e-taratsel-dimitrovi-s-astvatsatsin-ekexecu-patkaneliutyan-masin.html:

АРХИТЕКТУРНЫЕ ОСОБЕННОСТИ И ВОПРОСЫ ПРОИСХОЖДЕНИЯ ЦЕРКВИ "СВЯТАЯ БОГОРОДИЦА" В СЕЛЕ ДИМИТРОВ В КОНТЕКСТЕ АРХЕОЛОГИЧЕСКИХ ЭКСПЕРТИЗ

Ованнисян Г.А.

В статье представлены экспертные исследования, культурологического (археологического) объекта – церковь «Святая Богородица». Основное содержание исследования составляет анализ архитектурно-декоративных особенностей церкви «Святая Богородица». Одновременно с этим проанализированы задействованные методологические подходы исследования и принципы их применения. Значительное внимание уделено уже выполненным строительным работам, не только по реставрации самой церкви, но и по движимым культурным ценностям и объектам культурного наследия на охраняемой территории исторического памятника. В

результате проведенных экспертных работ, выявлены признаки воздействия уже проведенных строительных работ в самой базилике как памятника культурного наследия. В данной статье предпринята попытка подтверждения достоверности теории об истории строительства храма, его религиозной направленности и национальной принадлежности.

Ключевые слова: *археологическая экспертиза, культурология, происхождение, крест, архитектура, базилика, хачкар, надпись.*

ARCHITECTURAL FEATURES AND ISSUES OF THE ORIGIN OF THE "HOLY MOTHER OF GOD" CHURCH IN THE VILLAGE OF DIMITROV IN THE CONTEXT OF ARCHAEOLOGICAL EXPERTISE

Hovhannisyan G.

The article presents expert studies of the culturological (archaeological) object - the church "Holy Mother of God". The main content of the study is the analysis of the architectural and decorative features of the church "Holy Mother of God". At the same time, the involved methodological research approaches and the principles of their application are analyzed. Considerable attention is paid to the already completed construction work, not only on the restoration of the church itself, but also on movable cultural property and cultural heritage objects in the protected area of the historical monument.

As a result of the expert work carried out, signs of the impact of the construction work already carried out in the basilica itself as a monument of cultural heritage were revealed. This article attempts to confirm the reliability of the theory about the history of the construction of the temple, its religious orientation and national identity.

Keywords. *archaeological expertise, culturology, origin, cross, architecture, basilica, khachkar, inscription*

Ներկայացվել է խմբագրության 02.09.2022
Ընդունվել է տպագրության 25.11.2022